

Ամէն անգամ, երբ ես մատնուում եմ դժուարութեան, երբ անլուծելի հարցեր մաշում են միտքս, ես ինձ հարց եմ տալիս՝ իմ տեղը ինչ կ'անէր Ռոստոմը այս պայմաններում: Եւ ինչ որ, իմ կարծիքով, պիտի անէր Ռոստոմը՝ անում եմ ես¹:

Սիմոն Վրացեան

ԻՆՉ ԿԱՆԵՐ ՌՈՍՏՈՄԸ*

Բանալի բառեր – Ռոստոմ, ՀՅ Դաշնակցություն, կենդանի գործ, դասական օրինակ, ուտիլիտարիզմ, դրական օրինակ, Սիմոն Վրացեան, ՀՅԴ սոցիալիստական քաղաքականություն, տիրական հայացք:



Ներկա տարեսկզբից մեզանում իրար հետևից նշվող հայ գրականության ու մշակույթի երախտավորների հորելյանները ստվերեցին 19-րդ դարի վերջերի – 20-րդ դարի սկզբների մեր քաղաքական կյանքի հիմնական դերակատարներից մեկի՝ Ռոստոմի (Ստեփան Ջորյան) մահվան 100-ամյա տարելիցը, և օրեցօր արագացող ժամանակի հեքի մեջ կարծես թե մոռացության մատնեցինք հիշատակն այն պայծառ անհատականության, ով իր անջնջելի հետքն է թողել Հայոց պատմության մեջ:

Գաղտնիք չէ, որ Ռոստոմի տիրական ձեռքն է կրում զինանշանն այն կուսակցության, որն առաքելություն ունի հայ ժողովրդի առջև, ինչի սուր կարիքը վերջին 1 տարվա ներքաղաքական վայրիվերումների արդյունքում ոչ թե նվազել, այլ էլ ավելի է ընդգծվել: Որովհետև մեր երկրում արդարության հաստատման համար հեղափոխություն արած ժողովուրդը տեսականորեն անգամ չէր կարող մերժել այդ արժեքների կրող ՀՅ Դաշնակցությանը: Ուղղակի նա հիշեցրել է մեզ, որ դրանք ոչ թե գիտելիքներ են մեզ համար, այլ Ռոստոմի կազմած ՀՅԴ **Հավատո հանգանակի** միջոցով կյանքի կոչվող **կենդանի գործ**:

Ուստի՝ հեղափոխությունից հետո ստեղծված նոր իրավիճակում պարտավոր ենք վերհիշել անցյալում մեզ բաժին ընկած ճգնաժամերը հաղ-

* Ընդունվել է տպագրության 23. 03. 2019: 1 **Վրացեան Ս.**, Կենսքի ուղիներով. դէպքեր դէմքեր ապրումներ, հատ. ք., Պէյրուիթ, տպ. «Մշակ», 1960, էջ 170-171:

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019
ՎԷՎ համահայկական հանդես

թահարելու առավել ուսանելի օրինակները: Իսկ Ռոստոմի փորձը հիրավի՝ դասական օրինակ է բոլոր ժամանակների և դաշնակցականների բոլոր սերունդների համար, քանզի ՀՅԴ ներկուսակցական մշակույթի հիմքն առաջին հերթին՝ Ռոստոմի ստեղծած ավանդույթների համակարգն է:

ՀՅԴ քաղաքական գործն առաջ տանելու ֆենոմենալ ունակության շնորհիվ Ռոստոմի կերպարն այնքան է միաձուլվել հարազատ կուսակցության անցած ուղու հետ, որ հետագայում ևս դժվար է եղել տարանջատել այդ իրողությունները: Իր անձնական **եսը** կուսակցության նպատակներին ստորադասելու պատճառով հենց Ռոստոմն է եղել լուռ, համեստ ու պարտաճանաչ խոնարհ հերոսների **Խոնարհ առաջնորդը**, ուստի սերունդների հիշողության մեջ նա մնացել է իբրև՝ «...Դաշնակցութիւնը ինքը իր բովանդակ էութեամբ»²:

Երիտասարդ տարիներին Ռոստոմը նույնպես երբեմն հայտնվել է անելանելի թվացող իրավիճակների առջև, և այդ պահերին նրան օգնության է հասել իր ավագ ընկերը՝ Քր. Միքայելյանը՝ «Եթէ դու էլ թուլանաս, ուրիշներից ինչ պէտք է պահանջենք: Մի՞թէ «Դաշնակցութիւն»ը այժմ աւելի քիչ ես սիրում քան առաջ...»³, - 1900 թ. մարտի 22-ի նամակում Ռոստոմին ուղղված Քր. Միքայելյանի այս հանդիմանությունը ոչ միայն սթափեցրեց վերջինին, այլև նոր լիցք հաղորդեց նրա գործունեությանը:

Եվ Քր. Միքայելյանից մինչև Ռոստոմ, իսկ Ռոստոմից մինչև սփյուռքյան 70-ամյա տարագրության տարիները՝ մեր մեծերը երբեմն հանդիմանելով, իսկ երբեմն էլ ոգևորելով մեկը մյուսին, սովորեցրել ու նաև՝ սովորել են չթուլանալու կամ «չթմրելու» գիտությունը: Պահանջկոտության ու ընկերական սիրո այս անբացատրելի համադրումի մեջ է ՀՅ Դաշնակցության կենսունակության գաղտնիքը, որովհետև ինչպես Ռոստոմն ինքն էր ուսուցանում իր երիտասարդ զինակիցներին՝ «Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. պէտք է զգալ, ապրել և հաւատալ»⁴:

Արտաքուստ զգացական թվացող՝ Ռոստոմի այս պատգամին հասու լինելու համար մեզ հարկավոր է վեր բարձրանալ վերջին զույգ տասնամյակներում **ուսիլիտարիզմի** աստիճանի հասած մեր գերազախուսալիզմից ու կրկին հավատով լցվել սեփական գործի հանդեպ: Քանզի առանց Ռոստոմի կողմից մեր Հավատո հանգանակում ամրագրված՝ դաշնակցական գործչի տառապանքով ու զոհողությամբ ձեռք բերվող **դրական օրինակի** հնարավոր չէ կրկին դառնալ ժողովրդի մտքերի տիրակալն ու նրա դաստիարակը: Նման եղանակով ամրապնդվող՝ ՀՅԴ գործի հանդեպ հավատն է եղել կուսակցական ծրագիրը ժողովրդի համար սրբություն դարձնելու միակ ուղին: Եվ նա նորից կդառնա այդպիսին, եթե Ռոստոմի նման՝ կրկին խոնարհվենք հարազատ ժողովրդի իմաստնության ու հանձնարի առջև:

«Մի օր, - վկայում է Ս. Վրացյանը, - երբ ես վրդովված՝ գանգատում էի հայ մարդու տգիտության, ընչասիրության, խորամանկության և ուրիշ վատ յատկությունների մասին, Ռոստոմը հարցրեց անվրդով. - Դու Անին տեսել

2 **Վրացեան Ս.**, Ռոստոմ «Ռոստոմ. մահուան վաթսուամեակին առթիւ», Պէյրուք, Համազգայինի Վահե Սէթեան տպարան, 1979, էջ 12:

3 Քրիստափոր Միքայելեանի նամակները, Պէյրուք, Համազգայինի ձեմարանի համակարգչային շարուածք, 1993, էջ 122:

4 **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. դէպքեր դէմքեր ապրումներ, հատ. ք, Պէյրուք, տպ. «Մշակ», 1960, էջ 173:

ես: -Անշուշտ, պատասխանեցի ես զարմացած: -Անին հայ մարդն է կառուցել: Դու «Նարեկ» կարդացել ես: -Ի հարկե կարդացել եմ: -«Նարեկ»ը հայ մարդն է յօրինել: Դու Սասունցի Դաիթը գիտես: Գիտեմ, ինչ խօսք: Սասունցի Դաիթը Հայ ժողովուրդն է ստեղծել: **Ասա, խնդրեմ, դու ինչո՞ւ համար դաշնակցական ես** (ընդգծումը մերն է-Գ. Խ.)»⁵:

Այս փոքրիկ «հարցաշարը» ու մանավանդ՝ դրա ավարտին Սիմոն Վրացյանին ուղղված Ռոստոմի հանդիմանությունը լուսարձակում են ՀՅԴ գոյության բուն իմաստը: Իր առաջին իսկ քայլերից սկսած, որպես **հայ ժողովրդականների**⁶ (նարողնիկների) կողմից ստեղծված կուսակցություն, ՀՅ Դաշնակցությունը եղել է ժողովրդի տրամադրությունների թարգմանը: Ուստի ժողովրդից բողոքելն ինքնին հարցականի տակ էր դնում ցանկացած անհատի, անգամ Սիմոն Վրացյանի նման մեծության դաշնակցականությունը: Իսկ ժողովրդի քաղաքական ընկալումների մեջ թափանցելու համար հարկ է գիտակցել, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր հայ իրականության մեջ **ինչ է ասում** հարցը ընկալվում է միայն ու միայն **ով է ասողը** բանաձևի շրջագծում, այսինքն՝ որքանով է տվյալ խոսքը համապատասխանում նրա հեղինակի կենդանի գործին: Ռոստոմը մեզ սովորեցրել է սեփական նվիրումով ու պայքարով ձեռք բերված քաղաքական որակներով ժողովրդի վստահությունը վաստակելու և այն որևէ անցողիկ արժեքի հետ չփոխանակելու գիտությունը:

1905 թվականի գարնանից՝ Քր. Միքայելյանի նահատակությունից մինչև իր մահը, լինելով ՀՅ Դաշնակցության ճանաչված առաջնորդը, Ռոստոմը դարձել է հայ ժողովրդի տնտեսական ազատագրության համար պայքարը գործնական գետնի վրա տեղափոխած **ՀՅԴ սոցիալիստական քաղաքականության** հիմնադիրը՝ իր իսկ նախաձեռնած «Կովկասյան նախագծի» և իր գլխավորած 9-ի հանձնախմբի կազմած 1907 թվականի ծրագրի միջոցով: Քաղաքական կարգախոսից՝ ամենօրյա կենդանի գործի վերածված սոցիալիստական իդեալը բյուրեղացնելու և կենդանի գործի վերածելու համար նա ասպարեզ է բացել նոր սերնդի առջև՝ միաժամանակ իր հմուտ ու տիրական ձեռքով զսպելով վերջինիս աջակողմյան ու ձախակողմյան տատանումները: **Աշխատանքի դատին** հետամուտ այդ սերնդին Ռոստոմն ապահովել է գործելու ասպարեզ ու կարողացել է համոզել նրան, որ սին են ձախ կամ աջ թեքվելու միջոցով ՀՅ Դաշնակցությունից դուրս մի «նոր Դաշնակցություն» փնտրելու փորձերը:

Միաժամանակ՝ իր ռազմավարական մտածողությամբ ու դրան համապատասխանող մարտավարական հմտությամբ և, ամենակարևորը՝ վտանգներն ու մարտահրավերները կանխատեսելու զարմանալի ունակությամբ՝ «ձիու բնագողով», հենց նա է եղել 20-րդ դարի առաջին տասնամյակների մեր ազգային-ազատագրական պայքարի ճանաչված առաջնորդը: Եվ այն փոքրիկ երկիրը, որն ունենք այսօր, մեծապես պարտական է Ռոստոմին՝ Արևելյան Հայաստանը ևս հայաթափելու փորձերի ձախողման համար:

Առաջին անգամ դրանք ակնհայտ դարձան արտաքուստ միայն քառ-

5 Նույն տեղում, էջ 172-173:
6 Տե՛ս ՀՅԴ քաղաքական նպատակն առաջին անգամ բանաձևած «Հայ ժողովրդականների մասնաժողովի» («Հայրենասերների Միության») առաջին թողոցիկը՝ «Վէմ», Եր., 2018, N 3, էջ 265-267:

սային՝ 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների շրջանում՝ Օսմանյան կայսրության կառավարիչների ու Ռուսական առաջին հեղափոխության ալիքը սանձելու համար Կովկասյան Վանդեայի ձևավորման ծրագրերին ապավինած ցարական Ռուսաստանի հետադիմական շրջանակների ընդհանուր նպատակների հետնախորքում: Ցարական Ռուսաստանի մայրաքաղաքից անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթած Ռոստոմի ռազմավարական մտածողության և դրան գումարված ռազմատեխնիկական անհրաժեշտ նախապատրաստությունների շնորհիվ հաջողվեց ոչ միայն կանխել այդ մահացու վտանգը, այլև լուրջ հակահարված հասցնել երկու կայսրությունների մարդատյաց ու հետադիմական շրջանակների դավադրության գործիքի վերածված կովկասյան թաթարների խառնամբոխին:

Երկրորդ անգամ՝ ճակատագրական 1918 թվականին, Ռոստոմի ճշգրիտ ռազմավարական հաշվարկի շնորհիվ էր, որ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո քառսի մեջ հայտնված Ռուսաստանի Արևմտյան ու Հարավ-արևմտյան ռազմաճակատներից դեպի հայրենիք վերադարձող հայ զինվորականությունը համախմբվելով ու բռնցքվելով Բաքվում՝ տարածաշրջան ներխուժած Օսմանյան կայսրության կանոնավոր բանակի դեմ բացեց **Հայկական երկրորդ ճակատը** և մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը ստիպեց հակառակորդին քարշ գալ Ապշերոնյան թերակղզու մատույցներում ու Դաղստանի լեռներում: Դրանով իսկ կանխվեց Մայիսյան հերոսամարտերից հետո ամենևին էլ չվերացած՝ Երևանը գրավելու և Հայաստանի մանուկ անկախությունն իր բնի մեջ խեղդելու երիտթուրքերի նպատակադրման իրականացումը:

Այս երկու մահացու սպառնալիքների չեզոքացման գործում վճռորոշ դերակատարություն ունեցած քաղաքական գործչին ցանկացած երկրում տասնյակներով հուշարձաններ կկառուցեին: Բայց մինչ օրս հայաստանյան պատմաբանները Ռոստոմին հիշում են միայն ՀՅ Դաշնակցության հիմնադիրների անուն-ազգանունները թվարկելու ընթացքում, իսկ երբեմն էլ գոհունակությամբ արձանագրում են սոսկ այն փաստը, որ Բաքվի հերոսամարտի ընթացքում նա համագործակցել է բոլշևիկ Ստեփան Շահումյանի հետ՝ մոռանալով որ հայ զենքի ու կամքի այդ անօրինակ խոյանքը հենց Ռոստոմի քաղաքական հեռատեսության արդյունքն էր:

Ուստի, երբ այսօր բաղդատում ենք Ռոստոմի ժամանակներից մեզ մեկ դար բաժանող ՀՅԴ անցյալի ու ներկայի քաղաքական առաջնահերթությունները և Հայաստանին ու հայությանը բաժին ընկած արտաքին մարտահրավերները, ապա արձանագրում ենք այն փաստը, որ 1905-ին հենց Ռոստոմի կողմից բարձրացված **աշխատանքի դատի** համար պայքարի դրոշն ու Այսրկովկասում մեր զբաղեցրած տարածքների **պաշտպանության խնդիրը** ինչպես 100 տարի առաջ, այնպես էլ այսօր եղել ու մնում են բացարձակ առաջնահերթություններ:

Ու քանի որ դաշնակցական գործիչների հաջորդական սերունդները Ռոստոմի օրինակով են չափել սեփական գործերը, իսկ ամենածանր պահերին հարց են տվել իրենք իրենց՝ «ի՞նչ կաներ Ռոստոմը, եթե հայտնվեր այս պայմաններում», ապա այսօր՝ Ռոստոմի մահվանից 100 տարի անց փորձենք **յուրաքանչյուրս մեզ համար** հստակեցնել, թե ի՞նչ կաներ Ռոս-

տունը, եթե ապրեր մեր ժամանակներում:

Նախ և առաջ՝ Ռոստոմը կտար «քաղաքական մոմենտի» իր սահմանումը. Հայաստանը ներքաղաքական առումով հայտնվել է հնի ու նորի դիմակայության հորձանուտում, որն իր շուրջը ծավալվող վտանգավոր զարգացումների համատեքստում ձեռք է բերել աշխարհաքաղաքական կերպավորում: Ուստի նա մեզ կհիշեցնեք 1918 թվականի ծանրագույն պայմաններում Հայկական երկրորդ ճակատի ստեղծման իր փորձառության իմաստը՝ «Ադրբեջան» արհեստական պետության ձեռքով Հայոց ցեղասպանությունն Անդրկովկասում շարունակելու և իր ավարտին հասցնելու Թուրքիայի քաղաքական նպատակի ձախողումը: Եվ կրկին արձանագրելով թուրքադրբեջանական **միասնական քաղաքականության** առկայության փաստը, նա մեր ներկա սերնդից նույնպես կպահանջեր մոռանալ առանձին վերցված՝ Ադրբեջանի հետ Ղարաբաղի հարցով փոխզիջման հասնելու պատրանքը, քանզի Թուրքիան է գծում «... ադրբեջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակետից պարզ է: Տաճիկները ձգտում են հայ ազգի ֆիզիկական ոչնչացման...»⁷:

Ներքին ճակատում՝ հնի ու նորի պայքարի համատեքստում արձանագրելով, որ Հայաստանի նորացման անխուսափելիությունն ու անշրջելիությունը թելադրված են առարկայական պատճառներով, Ռոստոմը վերջինիս կրողների անփորձությունն ու արհեստավարժության պակասն **անպայման** կտարանջատեր նրանց վերագրվող «վտանգավոր» նպատակներից: Որովհետև ՀՅԴ-ն որպես ազգային և սոցիալիստական կուսակցություն՝ պարտավոր է ինքն իրեն սահմանազատել Ռոստոմի բնորոշումով՝ **ազգայնության** (և ոչ թե՛ ազգայնականության) պահպանողական ու լիբերալ ընկալումներից՝ սեփականը հաստատելով **աշխատավորական** հենքի վրա: Ուստի՝ քաղաքական ասպարեզից հեռացած հներին բնորոշ ազգային պահպանողականությունը տարփողելու և այդ դիրքերից նորերի ծայրահեղ ազատականությունը դատափետելու փոխարեն՝ Ռոստոմը կբացահայտեր մեր ազգայնության աշխատավորական, այսինքն՝ **առաջադիմական** բնույթը և կառաջնորդվեր ոչ թե անցյալն ու ներկան, այլ **ներկան** ու **ապագան** բաղդատելու սկզբունքով:

Ռոստոմն արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար անհրաժեշտ արդար Հայաստանի մեր կարգախոսային ընկալումը կվերածեր քաղաքականության և այն կյանքի կոչելու համար կոնկրետ ու հստակ քայլերի միջոցով ասպարեզ կհրավիրեր նորահաս **երիտասարդությանը**՝ ճիշտ այնպես, ինչպես վարվեց 1905-1907 թվականներին վրացյանների, ջամայանների և ՀՅԴ անկախության սերնդի մյուս ակնառու դեմքերի հետ և երիտասարդության գաղափարականացման ճամփով՝ կրկին կքաղաքականացներ կուսակցությունը «Դեպի երկիր» կարգախոսը լցնելով նոր ու թարմ արյունով՝ «Դեպի ժողովուրդ» նշանաբանով:

Ռոստոմը մի մեծ ու թավ **գիծ կբաշեր** անդառնալիորեն պատմության գիրկն անցած վերջին 20-ամյակի տակ և իր ուսերին կառներ ողջ պատասխանատվությունը՝ միաժամանակ յուրաքանչյուրիս ցույց տալով իր տեղն ու դերը: Եվ այդ ամենը կաներ փոխադարձ անվստահությունը՝ անգորու-

⁷ Մեջբերումը ըստ՝ **Ալշուջեան Ա.**, Ռոստոմը Բաքվում, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1956, N 7, էջ 6:

թյան, իսկ անզորությունը՝ բարեկանության վերածող իր տիրական հայացքի կախարդական ուժով, և ինքներս անգամ չէինք նկատի, թե ինչպես ենթարկվեցինք նրա համոզիչ փաստարկներին:

Ուստի խոնարհվելով Ռոստոմի անմահ հիշատակի առջև՝ այսօր պարտավոր ենք գիտակցել, որ 100-ամյա հեռավորությունից անգամ մեր հոգու խորքերը թափանցող նրա թովիչ, բայց փոքր-ինչ հեզնախառն ժպիտը ոչ միայն յուրաքանչյուրիս հանդեպ անսահման սիրո, այլև պահանջկոտության արտահայտություն է: Որպես մեր ներկա դրության հայելային արտացոլում՝ Ռոստոմի այդ տիրական հայացքը հիշեցնում է մեզ, որ իրավունք չունենք թուլանալու հարազատ ժողովրդի առջև ունեցած մեծ առաքելության իրականացման ճանապարհին:

Խմբ.:

WHAT WOULD ROSTOM DO?

Key words – Rostom, ARF Dashnaksutyun, vivid work, classic example, utilitarianism, positive example, Simon Vratsyan, ARF socialist policy, imperious glance.

Edit.

ЧТО СДЕЛАЛ БЫ РОСТОМ?

Ключевые слова – Ростом, АРФ Дашнакцутюн, живое дело, классический пример, утилитаризм, положительный пример, Симон Врацян, социалистическая политика АРФ Дашнакцутюн, властный взгляд.

Ред.